

2009-11-30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Բոստանջյանի և Գոհարիկ Ենոքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափ կիրառել Հայաստանի Հանրապետության տարածքում արտահանման նպատակով արտադրված ապրանքների իրացման նկատմամբ, ինչը համարում ենք սկզբունքորեն անընդունելի՝ հետևյալ նկատառումներով՝

1. Նախագծի անհրաժեշտության հիմնավորման մեջ նշված է, որ օրենքի ընդունումը նպատակ ունի խթանելու արտահանման ծավալների աճը:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտահանված ապրանքների իրացման դեպքում արտահանողը ձեռք է բերում նախորդ բոլոր օղակներում իր մատակարարներին վճարած ավելացված արժեքի հարկի գումարները հետ ստանալու կամ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավունք: Կարծում ենք, որ անմիջական արտահանողից ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափի կիրառման արդյունքում առաջացող՝ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մի մասի տեղափոխումը նախորդ օղակներ որևէ կերպ լրացուցիչ խթան չի կարող հանդիսանալ արտահանման ծավալների մեծացման համար: Դրա փոխարեն կստեղծվեն լրացուցիչ վարչարարական խնդիրներ, մասնավորապես, ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափի կիրառման արդյունքում մատակարարների մոտ առաջացող՝ վերադարձման կամ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների հիմնավորվածությունը ճշտելու հարցում:

2. Միջազգային պրակտիկայում ապրանքների արտադրության և իրացման շղթայում ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափ կիրառվում է միայն մեկ՝ արտահանման փուլում: Հայտնի չէ որևէ երկիր, որն ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափ կիրառի ապրանքների իրացման շղթայի երկու օղակում:

3. Նախագծի ընդունումն ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափի ոչ արդարացի կիրառման հնարավորություն է ստեղծում: Մատակարարված ապրանքները կարող են չարտահանվել Հայաստանի Հանրապետության տարածքից՝ տարբեր պատճառներով քաղաքացիաիրավական պայմանագրի չկատարման հետևանքով: Այս դեպքում ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափի կիրառումն ուղղակի արդարացված չի

լինի: Նախագծով ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառման պայման է ոչ թե «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանումը, այլ՝ նման բովանդակությամբ պայմանագրի առկայությունը:

4. Նախագծի ընդունման դեպքում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառման համար անհրաժեշտ և բավարար պայման կլինի «տվյալ ապրանքն» «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանելու վերաբերյալ քաղաքացիաիրավական պայմանագրի առկայությունը: Ապրանքները չարտահանվելու պարագայում նախագծով նախատեսված չէ ինչպես ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի չկիրառում (կամ վերահաշվարկ), այնպես էլ՝ որևէ պարտավորության կամ պատասխանատվության սահմանում: Այսինքն, նախագծի ընդունման պարագայում պարարտ հող կստեղծվի չարաշահումների համար: Հարկ վճարողը կարող է ներկայացնել կեղծ պայմանագիր, իսկ ապրանքը չարտահանվելու դեպքում կեղծիքը կարող է «արդարացվել» տարբեր պատճառաբանություններով:

5. Նախագծով նախատեսվում է ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառում «տվյալ ապրանքն» արտահանելու վերաբերյալ պայմանագրի առկայության դեպքում: Հասկանալի չէ, թե ինչ կարգով է հիմնավորվելու, որ պայմանագրի առարկան «տվյալ ապրանքն» է (իրացված ապրանքը նույնականացվելու է այլ անձի կնքած պայմանագրում նշված ապրանքի հետ):

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Նախագիծ  
Պ-749-30.10.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում ավելացնել նոր 13-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«Արտահանման նպատակով Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, երբ դրանք արտադրող տնտեսվարող սուբյեկտը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ունի կնքված քաղաքացիաիրավական պայմանագիր տվյալ ապրանքը «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտի հետ»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

## **Հիմնավորում**

### **«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի անհրաժեշտության մասին**

Ներկայումս ՀՀ-ում գործող տնտեսվարող սուբյեկտներից ոչ բոլորն ունեն համապատասխան հնարավորություններ օտարերկրյա շուկաների պահանջարկը լիովին բավարարելու համար եւ ոչ բոլորը ունեն հնարավորություններ անմիջական կապ ստեծելու այդ շուկաների հետ:

Սույն օրենքի ընդունմամբ կավելանան ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտները (մասնավորապես փոքր եւ միջին), կաճեն արտահանման ծավալները եւ կխթանվի նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացը: